ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԻԼԻԹ ՕՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 129-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 6-րդ մասի, աշխատակարգային նիստում քննության առնելով «Լիլիթ Օհանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը քննության ընդունելու հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Լիլիթ Օհանյանը (ներկայացուցիչ՝ փաստաբան Մինաս Մալխասյան) 2019 թվականի սեպտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումում խնդրել է.

«Խնդրում եմ հակասահմանադրական ճանաչել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՕ-110-Ն) 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը»:

2. Դիմողը գտնում է, որ ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը դասվել և դասվում է մարդու հիմնական քաղաքացիական իրավունքների և ազատությունների շարքին: Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու սահմանադրական իրավունքների հետ մեկտեղ այն մարդուն հնարավորություն է տալիս սեփական կամքին համապա-

տասխան տեղաշարժվել տարածության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանվել իր նկատմամբ կատարվող ոտնձգություններից:

Դիմողը նշում է, որ մեկնաբանվող իրավունքը հռչակված է մարդու իրավունքների մասին գրեթե բոլոր հիմնական միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ Արձանագրության 2-րդ հոդվածում:

Դիմողի կարծիքով՝ չնայած տարածաշրջանային և համաշխարհային մակարդակի միջազգային իրավական ակտերում առկա որոշակի բովանդակային տարբերություններին՝ մեկնաբանվող իրավունքի ընդհանրական վերլուծությունը հնարավորություն է տալիս ասելու, որ լայն իմաստով ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու սահմանադրական իրավունքը մարդու բնականորեն ծագած, անօտարելի, օրենսդրորեն ամրագրված և երաշխավորված իրավազորությունն է՝ օգտվելու այն երկրի տարածքում անարգել տեղաշարժվելու, ինչպես և իր կողմից որոշվող վայրում ժամանակավորապես կամ մշտապես բնակվելու հնարավորությունից, որի տարածքում նա օրինական հիմքերով գտնվում է:

Ըստ դիմողի, մարդն ինքն է որոշում, թե իր օրինական զբաղեցրած տարածքներից որն է ամրագրվելու որպես բնակության վայր, իսկ պետությունն իրավասու չպետք է լինի տվյալ հասցեում մարդու բնակության վայրը չհամարել որպես այդպիսին: Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է ենթարկվել սահմանափակման բացառապես օրենքով:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ուժով՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում նույն

օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Վերը նշված նորմից բխում է, որ դիմողը, միաժամանակ, պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով փաստարկի իր կողմից վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր կոնկրետ սահմանադրական իրավունք(ներ)ի ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթ(ներ)ի կամ դրա(նց) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնց չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դիմումի ուսումնասիրությունից երևում է, որ դիմողը ներկայացնում է երկու փաստարկ. ա/ որևէ սահմանադրական իրավունքի սահմանափակման համար պետք է լինի օրենսդրական ուղղակի պահանջ՝ ամրագրված «օրենք» անվանումը կրող

նորմատիվ իրավական ակտում, բ/ վիճարկվող նորմը Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ կիրառելիս հանգեցրել է ազատ տեղաշարժվելու հիմնական իրավունքի սահմանափակման:

Դիմողի՝ վերը նշված փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել հիմնավորումներ իր՝ ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ: Սույն գործով վերջնական դատական ակտ հանդիսացող ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, բավարարելով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, արգելել է Լիլիթ Օհանյանին **իր անչափահաս երեխաներին դուրս բերել ՀՀ տարածքից, այլ ոչ թե արգելել է դիմող Լիլիթ Օհանյանին դուրս գալ ՀՀ տարածքից:**

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ որևէ սահմանադրական իրավունքի սահմանափակման համար պետք է լինի օրենսդրական ուղղակի պահանջ՝ ամրագրված «օրենք» անվանումը կրող նորմատիվ իրավական ակտում, ապա պարզ չէ, թե դիմողն ինչ ի նկատի ունի. դիմողը պարզապես ներկայացնու՞մ է տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը, թե՞ դժգոհում է նրանից, որ ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման համար բավարար չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված վիճարկվող նորմը, այլ պետք է ընդունվի նաև առանձին օրենք:

Վերոնշյալ հիմնավորումների բացակայությունը սույն դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Լիլիթ Օհանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

4 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴԱՈ-105